ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 930-Ա

«24» սեպտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐ) ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26. 08. 2021 թվականի թիվ 208-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 12-ի N ՄՈ/789-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքում ավագանիների համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ քարոզչության կողմերին (կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ) հանդիպումների և դրա հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմունքներով, օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրամադրել, սույն որոշմանը կից ցանկով սահմանված դահլիճները:

2. Սույն որոշումն ուղարկել ՀՀ Կետրոնական ընտրական հանձնաժողով և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
պաշտոնակատարի
«24» սեպտեմբերի 2025 թվականի
թիվ 330-Ա որոշմամբ

ՑԱՆԿ

2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքում ավագանիների համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների

ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Դահլիճի, շինության անվանումը	Գտնվելու վայրը (հասցեն)	Նստատեղերի թիվը	Տրամադրելու օրերը և ժամերը	Դահլիճը, շինությունը տնօրինողը	Այլ նշումներ
1.	ք.Էջմիածին	Վաղարշապատի համայնքապետարանի Կոմիտասի անվան մշակույթի պալատ ՀՈԱԿ-ի դահլիճ	ք.Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց փողոց, 75	475	**Հոկտեմբեր ամիս** բացառությամբ երկուշաբթի օրերից և հոկտեմբերի 22-ից-25-ը ժամը 10:00-ից մինչև 20:00 **Նոյեմբեր ամիս** յուրաքանչյուր օր բացառությամբ երկուշաբթի օրերից ժամը 10:00-ից մինչև 20:00	Վաղարշապատի համայնքապետարան	
2.	գ.Ոսկեհատ	Վաղարշապատի համայնքապետարանի Ոսկեհատ բնակավայրի մշակույթի տան դահլիճ	գ. Ոսկեհատ, Մաշտոցի փողոց, 43	310	Յուրաքանչյուր օր 10:00-ից մինչև 20:00	Վաղարշապատի համայնքապետարան	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ